# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ «ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ԹԵՄԱՅՈՎ

**26.08.2025 11:02**

Հարգելի՛ փաստաբաններ,

2025թ.-ի օգոստոսի 27-ին և 28-ին ժամը 15:00-ին ՀՀ փաստաբանների պալատի մեծ դահլիճում՝ ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ, տեղի է ունենալու վերապատրաստման դասընթաց՝ «**Վարչական դատավարության էլեկտրոնային համակարգը**» թեմայով: Դասընթացը կվարեն ՀՀ արդարադատության նախարարության և համակարգը մշակող «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի ներկայացուցիչները:

**Դասընթացը տեղի է ունենալու երկու ձևաչափով՝ առկա և հեռավար:**

Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 27.08.2025թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին: Նամակում անհրաժեշտ է նշել դասընթացի թեման, անունն, ազգանունը և արտոնագրի համարը, **մասնակցության օրը, և մասնակցության ձևաչափը՝ հեռավար կամ առկա:**

Յուրաքանչյուր դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Միաժամանակ հայտնում ենք, որ Դասընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով դասընթացը կիրականացվի սահմանափակ թվով փաստաբանների մասնակցությամբ: Յուրաքանչյուր օր դասընթացին առկա տարբերակով կարող են մասնակցել 80, իսկ հեռավար տարբերակով՝ 200 փաստաբաններ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })